A 10.01.02
Դ-41

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ձեռագրի իրավունքով

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳԻ

ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագիտությունը՝ հայ դասական գրականություն - 10.01.02

Բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 1996

© National Library of Armenia OCR by Portmind

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնում

Գիտական ղեկավար - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս
ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐ.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀԱԿՈԲՅԱՆ Պ.Հ.

- բանասիրական գիտությունների դոկտոր
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 1996 թ. նոյեմբ ,,17,,-ին ժամը 14 ին, Երևանի պետական համալսարանի՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 012 մասնագիտացված խորհրդի նիստում /375049, Երևան, Ալեք Մանուկյան 1/:

Աշխատությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտաշխատողների կաբինետում:

Սեղմագիրն առաքված է ,,12,, հոկտեմբ 1996 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՎԱԳՅԱՆ Ա.Ա.

27 96-96

ԹԵՄԱՅԻ ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Դեռևս կենդանության օրոք Ալիշանն արժանացավ համահայկական ճոխ փառքի ու սիրո, գրական յուրօրինակ մի կերպավորման ենթարկվելով իրեն նվիրված հուշագրություններում և բանաստեղծություններում: Անցյալ դարի 60-ական թվականներից հայ գրական-քննադատական և հասարակական միտքը, կապված ժամանակի խնդիրների հետ, տասնամյակից տասնամյակ յուրովի արժագանքում էր ոչ միայն Ալիշանի ստեղծագործություններին, այլև նորովի անդրադառնում Հայոց Նահապետի կերպարին՝ դիմանկարն եղանակով նրան ոգեկոչելով թե ազգային երազների իրականացման պասումի և թե հուսախաբության պահերին: Այս ավանդույթը շարունակվեց նաև հետեղեռնյան շրջանի առաջին տասնամյակներին: Եթե մինչ այդ զարմանքով և հիացմունքով նշվում էր, թե Ալիշանը առանց Հայաստանը տեսնելու այնքան հմայիչ և կենդանի է պատկերել այն, ապա սկսած քսանական թվականներից տարագիր մտավորականներն արդեն ճակատագրի ընդհանրություն են գտնում իրենց և ,,Հայոց աշխարհիկի,, Նահապետի միջև, քանի որ բռնի կերպով պոկվելով հայրենի բնաշխարհից՝ իրենք ևս միայն մտովի կարող էին անցնել հայրենի երկրի նվիրական վայրերով:

Ընդհանուր այս արժևորմանը զուգընթաց Ալիշանի մահից անմիջապես հետո սկսվում է նաև նրա գիտա-գեղարվեստական ժառանգության քննությունը, որի առաջին քայլերը կատարվում են մխիթարյան միաբանության շրջանակում, երբ Ս.Ղազար կղզում դեռևս թևածում էր Նահապետի կենդանի շունչը, որի ազդեցությամբ մինչև 30-ական թթ. վերջերը գրված ուսումնասիրություններում շարունակ շեշտվում է նրա ստեղծագործությունների թողած վիթխարի դերն ու արդիական նշանակությունը: Հետագա տասնամյակներին, սակայն, գրական կենդանի այս հետաքրքրությունը աստիճանաբար փոխարինվում է գիտական քննությամբ, որը շարունակվում է առ այսօր: Հայ գրականության, գրականագիտության ու քննադատական մտքի պատմությանը նվիրված տարբեր աշխատանքներում ցույց է տրվում Ալիշանի խաղացած մեծ դերը կլասիցիզմից ռոմանտիզմին անցման շրջանում, հետագա հեղինակների վրա թողած մեծ ազդեցությունը, ուշադրության են արժանանում նրա գրական-տեսական և գեղագիտական ըմբռնումները: Միաժամանակ Ալիշանի նամակների, գրառումների և անտիպ գործերի ու ընդհանրապես մխիթարյան միաբանության վավերագրերի պարբերական հրատարակությունը հնարավորություն է տալիս առավել հստակ կերպով պարզելու նրա գործերի ստեղծման հանգամանքները, անձնական, կենսական և ազգային-հասարակական այն շարժառիթները, որոնցով պայմանավորված էին դրանք:

Ալիշանի գիտա-գեղարվեստական ժառանգության քննությունն այսօր ոչ միայն օգնում է ճիշտ հասկանալու նրա ստեղծագործությունների թողած

© National Library of Armenia

գրական-հասարակական վիճակի ազդեցությունը, այլև դրանք դիտելու անցյալ դարի երկրորդ կեսի գրական շարժման ազգային-հասարակական մտքի ընթացքի և որոնումների ընդհանուր համապատկերում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Մինչ այժմ Ալիշանի մասին եղած ուսումնասիրությունների արդյունքները նկատի ունենալով՝ մեր աշխատանքը նվիրել ենք հայ միջնադարյան մատենագրության հետ նրա գիտա-գեղարվեստական ժառանգության ընդհանրություններին: Հայ հին գրականությանը Ալիշանը կապված էր որպես բնագրեր հրատարակիչ ու գնահատող, հայ դասական մատենագրությամբ նվիրագործված ըմբռնումներն ու հայոց պատմության մասին փաստական հարուստ նյութն էր ընկած նրա տեղագրական նշանավոր հատորների հիմքում, մեր հին գրականությամբ ավանդված հերոսական դրվագներով էր բոցավառվելու նրա ստեղծագործական երևակայությունը, իսկ գեղարվեստական մտածողությունը կրելու էր հայոց միջնադարի շեշտված կնիքը: Այս պատճառով էլ մեր աշխատանքի նպատակն է եղել հետևյալ հարցերի քննությունը.

1. Ցույց տալ, թե Ալիշանի հրատարակչական գործունեությունը՝ հայ դասական մատենագրության երկերի, միջնադարյան տաղերի և ժողովրդական ստեղծագործությունների լույս ընծայումը գրականագիտական ինչ արժևորումների ու մտորումների են մղել գիտնական Ալիշանին և ստեղծագործական ինչ ներշնչանք պատճառել բանաստեղծ Նահապետին:

2. Նրա բազմաժանր գործերից ի մի հավաքել և տարորոշել հայ գրականության պատմությունն ըստ Ալիշանի՝ պարզելով, թե տարբեր հեղինակների հանդեպ նրա վերաբերմունքը և գնահատությունը որքանով էին պայմանավորված միջնադարյան և մխիթարյան գրականության ավանդներով և ժամանակի առաջադրած գրական-հասարակական խնդիրներով:

3. Գրականության պատմության տեսանկյունից բոլորից քիչ քննվել են Ալիշանի տեղագրական հատորները: Ելնելով մեր աշխատանքի նպատակից՝ հայոց միջնադարի հետ նրա ունեցած ընդհանրությունների շրջանակում փորձել ենք ցույց տալ, թե տեղագրական հատորներն իրենց կառուցվածքով, շարադրանքով և պատմահայեցողությամբ որքանով են կապված միջնադարյան գրականության հետ և ինչ չափով են առնչվում ու արձագանքում անցած դարի 70-90-ական թթ. գրականության մեջ արծարծվող խնդիրներին:

4. Նույն կերպ էլ Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության պարագայում վեր ենք հանել նրանց կապը միջնադարյան գրականության հետ թեմատիկ, ժանրային և լեզվա-ոճական առումով:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Եթե տարբեր ուսումնասիրություններում առանձին-առանձին են քննվել Ալիշանի հրա-

տարակչական գործունեությունը, գրական ստեղծագործությունները, գրականագիտական ըմբռնումներն ու քննադատական հայացքները և հայագիտական ժառանգությունը, ապա մենք փորձել ենք բացահայտել այն միասնությունն ու փոխկապակցվածությունը, որ կա Ալիշանի գիտական և գեղարվեստական գործերի միջև:

Գրականության պատմաբանները սովորաբար հպանցիկ կերպով են հիշատակել նրա տեղագրական հատորները, մենք, սակայն, հիմնավորել ենք, որ դրանց հրատարակումը հատկապես 1880-ական թթ. և ապա ընդհատումը 90-ական թթ. պայմանավորված էր ժամանակի գրական և ազգային-հասարակական խնդիրներով: Նաև վերլուծել ենք տեղագրական հատորների առավել գեղարվեստական հատվածները՝ ցույց տալով, որ դրանք ստուգաբանվում են նախորդ շրջանի գրական ավանդույթով, շնորհիվ որի ընդլայնվում է Ալիշանի այն գործերի շրջանակը, որոնք կապված են հայ գրականության հետ կամ էլ ազդել են վերջինիս հետագա ընթացքի վրա:

Ալիշանի ստեղծագործությունները քննել ենք ժամանակի մխիթարյան գրականության շրջանակներում՝ ցույց տալով, թե Ալիշանի ու մխիթարյան մյուս հեղինակների գեղարվեստական մտածողությունը որքանով էր կապված հայ հին գրականության հետ: Նման մոտեցումը օգնում է հետևելու միջնադարյան գրականության պատկերային համակարգի զարգացման ընթացքին և վերջինիս ներառմանը նոր գրականության գեղարվեստական համակարգի մեջ: Շնորհիվ որի նման աշխատանքը ոչ միայն նպաստում է Ալիշանի գործերի գեղարվեստական նրբությունների և առանձնահատկությունների վերհանմանը, այլև ստեղծագործական փորձի տեսանկյունից կարևորվում է այն հարցը, թե մի դարից մյուսին փոխանցվող գրական ավանդները, պայմանավորված ժամանակի առաջադրած գրական-հասարակական խնդիրներով, ներքին գեղարվեստական և իմաստային ինչ զարգացում են ապրում:

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ներկայացվող ատենախոսության համար հիմք են հանդիսացել Ալիշանին, հայկական կլասիցիզմին ու ռոմանտիզմին, 19-րդ դարի հայ և ընդհանուր եվրոպական գրականությանը նվիրված գրականագիտական ուսումնասիրությունները:

Աշխատանքը գրված է մենագրության ձևով և զերծ է գաղափարական-քաղաքական որևէ կաղապարի ազդեցությունից

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը ընտրվել է և երաշխավորվել պաշտպանության Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնում, Մաշտոցի անվան Մատենադարանի ,,Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց,, բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հրատարակած չորս հոդվածներում և Մատե-

նադարանի գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ Ներածություն, երեք գլուխներ և օգտագործված գրականության ցանկ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են ուսումնասիրվող թեմայի գիտական արդիականությունը, աշխատանքի և քննվող հարցերի կարևորությունն ու ընդհանուր բնութագիրը: Համառոտակի ներկայացված է հարցի պատմությունը՝ Ալիշանի մասին հայտնի առաջին գնահատական խոսքերից մինչև վերջին տասնամյակում հրատարակված գիտական մենագրությունները:

Գլուխ առաջին՝ ,,ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԻՇԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՄԲ,,: Հայ հին մատենագրության բնագրերի ալիշանյան հրատարակությունները թեմատիկ և ժամանակային համընկնումով բաժանվում են մի քանի խմբի՝ ազգային-ժողովրդական երգերի բազմալեզվյան շարք /1840-ական թթ./, հայ միջնադարյան մատենագրության մանր երկերի ,,Սոփերք հայկականք,, մատենաշար, հայ հին և թարգմանական գրականության հրատարակություններ /1860-ական թթ./, համանման բնագրերի և դրանց հատվածների զետեղում գիտական ուսումնասիրություններում և, վերջապես, այդ ամենի հանրագումարը՝ ,,Հայապատում,,:

Բազմալեզվյան հրապարակումների ի մի հավաքումը դարձավ Ալիշանի առաջին գիրքը՝ ,,Հայոց երգք ռամկականք,, , որը լույս տեսավ 1852 թ. անգլերեն զուգահեռ թարգմանությամբ: Զուգադիր նման հրատարակություններով մխիթարյանները աշխարհին էին ներկայացնում այն գործերը, որոնց օտարալեզու բնագրերը չէին պահպանվել, մնացել էին միայն հայկական թարգմանությամբ, ինչպես նաև համաշխարհային և ընդհանուր եկեղեցական պատմության համար հետաքրքրություն ներկայացնող հայ մատենագրության էջերը: Ատենախոսության մեջ մխիթարյան այդ հրատարակությունների հետ զուգահեռում ցույց ենք տալիս, որ Ալիշանը շարունակելով միաբանության այդ ավանդույթը, մեր ազգային կյանքում հայ երգը արժևորելուց հետո դրանք նաև առաջինը ներկայացրեց աշխարհին՝ հրատարակելով անգլերեն զուգահեռ թարգմանությամբ:

Այս ժողովածուի հրատարակումից մեկ տարի անց ,,Սոփերք հայկականք,, մատենաշարով Ալիշանը սկսում է հրատարակել պատմագրական անհամեմատ պարզ շարադրանք ունեցող մատենագրական մի շարք մանր երկեր: Համառոտ մի ակնարկով անդրադառնալով մխիթարյան և ընդհանրապես հայկական տպագրության նախորդ շրջանին՝ նշում ենք, որ ինչպես հայ դասական հոգևոր բանաստեղծության տպագրությանը 1840-ական թվականներից հաջորդեցին ազգային-ռամկական երգերի հրատարակությունները, նույն կերպ էլ

հայ դասական մատենագրության նախորդ շրջանի հրատարակություններին հաջորդում են հիշյալ երկերը: Եթե Մխիթար Սեբաստացու և նրա հաջորդների նպատակն էր աղճատումից մաքրել դասական հայերենը և մոռացությունից վեր հանել մեր պատմիչների գործերը, ապա 19-րդ դարի սկզբից արդեն կարևորվում է անցյալի ժառանգությունը և ժամանակի գիտության նվաճումները ժողովրդին մատչելի ձևով ներկայացնելը: Հայ միջնադարյան գրականության տարբեր երկերի բնագրերի հրատարակմամբ իսկ Ալիշանը արձագանքում է գրականության ժողովրդայնության հարցին՝ ծավալվող գրապայքարում անուղղակիորեն պաշտպանելով աշխարհաբարի դատը: Իսկ թե ինչու 1860-70-ական թթ. Ալիշանը հրատարակեց արդեն հայ դասական և թարգմանական գրականության մի շարք հուշարձաններ, բացատրվում է երկու հանգամանքով. Նախ որ գրականության հետագա ընթացքի շուրջ 1840-50-ական թթ. բորբոքված վեճերը արդեն զգալապես հանդարտվել էին հաջորդ տասնամյակներում, նաև այն, որ, ինչպես 1840-ական թթ. գիտա-հանրամատչելի և հայ գրականության արժևորմանը նվիրված առավել ընդհանուր ուսուցողական-դաստիարակչական շեշտվածություն ունեցող հոդվածներին հետագայում համապատասխանաբար հաջորդեցին տեղագրական և հայագիտական ուսումնասիրությունները, այնպես էլ առավել մատչելի և ժողովրդական շունչ ունեցող բնագրերի հրատարակմանը հաջորդելու էին դասական երկերի տպագրությունը:

Ներկայացնելով, թե ինչ շարժառիթներով էին պայմանավորված հայ հին գրականության տարբեր բնագրերի հրատարակությունները, միաժամանակ հանգամանորեն անդրադարձել ենք դրանց կցված նախաբաններին և այն ծանոթագրություններին, որոնք դուրս գալով ընդունված բնագրագիտական-աղբյուրագիտական շրջանակից՝ առավելապես արտահայտությունն են Ալիշանի անձնական զգացումների և վերաբերմունքի: Նման աշխատանքն կարևորվում է մի քանի առումով: Նախ և առաջ նկատենք, որ դրանց սեղմ տողերում ուրվագծվում են նրա ապագա ուսումնասիրությունների առաջնները և պատկերավոր այն յուրահատուկ շարադրանքը, որ գտնում ենք ,,Այրարատում,, , ,,Շիրակում,, և մյուս տեղագրական ու բանասիրական հատորներում: Ալիշանի անձնական ապրումների և զգացմունքների արձագանքը եղող այս ծանոթագրությունները միջանկյալ դիրք են գրավում բանասիրության և գեղարվեստի միջև՝ որպես գիտական քննության պատկերավոր դրսևորումներ, որոնցով ընդլայնվում է նրա գեղարվեստական ստեղծագործությունների շրջանակը: Նաև հրատարակված գործերի առաջաբաններում ու ծանոթագրություններում հայրենակարոտ գիտնականն ասես շարունակում է մեր հին շրջանի մատենագիրների խոսքը՝ նորօրյա ապրումներով լրացնելով նրանց տողերը, փորձելով նկարագրվող դեպքերով ազդել ընթերցողի

© National Library of Armenia

սիրտն ու հոգին, ոչ միայն նրան փոխադրել դարերի խորքը, այլև հրատարակվող գործերը հնարավորին չափ մոտեցնել ներկային, ջնջել ժամանակային անջրպետը: Նման ձգտումը մեկ անգամ ևս վկայում է, որ Ալիշանի այս հրապարակումները պայմանավորված էին ամենից առաջ ժամանակի կենդանի կյանքի թելադրանքով և գրական-հասարակական խնդիրներով:

Երկրորդ գլուխ՝ ,,ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԻՇԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ,,: Այս գլխում հնարավոր կրկնություններից խուսափելու նպատակով, երբ Ալիշանի կողմից, ասենք, Շնորհալու արժևորմանը պետք է անդրադառնայինք թե ,,Սոփերք Հայկականք,, շարքի, թե ,,Հուշիկների,, , թե ,,Շնորհալի և պարագա յուր,, գրքի և թե ,,Սիսուանի,, ու ,,Հայապատումի,, կապակցությամբ, մենք ընտրել ենք քննության թեմատիկ եղանակը: Այսինքն ոչ թե գիրք առ գիրք ներկայացրել ենք Ալիշանի հայտնած կարծիքները, յուրաքանչյուր հեղինակի առիթով ամեն անգամ անդրադառնալով միևնույն հարցին, այլ հակառակը, նրա գործերում հայ մատենագրության հետ առնչվող հարցերը թեմատիկ դասակարգմամբ միասնականության ենք բերել, մեկտեղել, իմի հավաքել տարբեր աշխատություններում միևնույն հեղինակին վերաբերող ցաքուցրիվ անդրադարձումները, ինչպես՝ Ալիշանը Խորենացու մասին, Նարեկացու, Շնորհալու, հայկական վերածնության մասին և այսպես շարունակ: Շնորհիվ նման աշխատանքի կազմվել է հայ հին գրականության պատմությունը ըստ Ալիշանի հետևյալ ենթաբաժանմամբ. հինգերորդ դարի դասական պատմագրություն, հայ պատմագրության ընթացքը 6-10-րդ դարերում, Գրիգոր Նարեկացի, Սարկավագ իմաստասերը և հայկական վերածնությունը, ,,Երրյակ Ներսիսյանք,,՝ նվիրված Ներսես Մեծին, Շնորհալուն և Լամբրոնացուն, հայ գրականության ընթացքը հետագա դարերում և նոր շրջանի գրականությանը վերաբերող առանձին մտքեր և գնահատությ ունները:

Ալիշանի գնահատությունները համեմատել ենք միևնույն հեղինակի մասին մեր դասական մատենագիրների տված բնորոշումների և մխիթարյանների գրական ըմբռնումների հետ, թե մխիթարյան բանասիրությունում գրականագիտական առումով որն էր բանաստեղծ գիտնականի բերած նորությունն, թարմությունն ու ինքնատիպությունը: Միաժամանակ նաև իրար հետ ենք համեմատել միևնույն հեղինակի մասին Ալիշանի 1850-60-ական թթ. հրատարակված գործերում և 1901 թ. լույս տեսած ,,Հայապատումում,, արտահայտած մտքերը, ցույց տալով, որ նա միայն որպես հայագետ ու գրականության տեսաբան չի քննում միջնադարյան գրականությունը, այլև այդ քննությունը շարունակ հարաբերում է իր ապրած ժամանակի հետ: Այս առումով հատկանշական է Խորենացու օրինակը, որին նա անդրադարձել է ,,Հուշիկներում,, և ,,Հայապատումում,,: Եթե 1860-ական թթ.

ազգային վառ երազներով ապրող Ալիշանը Լաստիվերցու ողբին զուգահեռ հիշում էր և Բագրատունյաց թագավորությունն ու Անին, ակնարկելով, որ կանցնեն պատմիչի հիշած ,,աւուրքն չարչարանաց,, , ապա համիդյան ջարդերի ծանր տպավորության ներքո գրված ,,Հայապատումում,, նա ողբալից է դառնում պատմիչին, ասես նրա հետ սգալով նորօրյա նահատակների համար:

Ալիշանի գրականագիտական-քննադատական հայացքների յուրահատկությունները ներկայացնել հատկապես շեշտել ենք այն իրողությունը, որ գրականության և պատմության փոխհարաբերությունում գրական երկերի ծնունդը և նրանց հետագա կենցաղավարումը կենդանի կյանքով և նրա առաջադրած խնդիրներով պայմանավորող Ալիշանը գտնում է, որ հայ պատմագրության տարբեր հուշարձանների գրության ժամանակը միայն բնագրական-աղբյուրագիտական քննությամբ չէ, որ կարելի է պարզել, այլև այդ գործերի ներքին տրամաբանությամբ և ազգային կյանքում խաղացած դերով, որն էլ կարող է հուշել, թե այդ երկերը երբ են ստեղծվել և ներառվել գրական կյանքում: Այսպես գրելով Խորենացու մասին, Ալիշանը գտնում է, որ Պատմահոր գործի բուն ոգին վկայում է, թե այն կարող էր գրվել միայն Ե դարում ծավալված ընդհանուր գրական-մշակութային շարժման ընթացքում, երբ նոր էր ընկել արշակունյաց թագավորությունը և ոչ թե հայոց պետականության անկումից երկու և ավելի դարեր հետո: Մեր աշխատանքում ներկայացրել ենք նաև Խորենացու պատմության մի շարք մթին, դժվար հասկացվող կամ գեղարվեստականորեն դժվար թարգմանելի համարվող պարբերությունների և արտահայտությունների ալիշանյան մեկնաբանությունները: Ալիշանը համանման փաստարկներով մերժել է նաև մեր մյուս պատմիչների երկերի վավերականության կամ գրության ժամանակի դեմ արտահայտված կարծիքները, որոնց քննությանը ևս մանրամասնաբար անդրադարձել ենք մեր աշխատանքում:

Հայ գրականագիտության համար առանձնակի կարևորություն ունի ,,Հուշիկների,, , ,,Սարկավագ [illegible],, դրվագը, որը դուրս գալով իմաստասերի ստեղծագործությունների քննության շրջանակից, կապվում է հայկական վերածնության խնդրին: Մեր մատենագրությունը ողջ խորությամբ և նրբերանգներով զգացող Ալիշանը հստակորեն թվարկում է վերածնությանը բնորոշ նորոգության և գրական ըմբռնումների հատկանիշները և ասում, թե Սարկավագը կանխեց ընդհանուր եվրոպական վերածնությանը ,,ինչ որ ԺԵ դարուն մէջ սկսան եվրոպացիք, ինքը մետասաներորդին սկսեր էր,,: Ալիշանի հայագիտական գործերում գեղարվեստական ըմբռնումները պահի ոգևորությամբ չեն պայմանավորված, այլ միշտ էլ հիմնվել են հայ մատենագրության խոր իմացությունից բխող եզրահանգումների վրա:

© National Library of Armenia

,,Շնորհալի և պարզա յուր,, ուսումնասիրությունից և ,,Հայապատումից,, բերված օրինակներով ցույց ենք տվել, թե հայկական վերածնության մասին այս միտքը Ալիշանը ինչպես է հետևողականորեն զարգացրել և հաջորդ տասնամյակներում:

Մխիթարյանները դասական գրականության իրենց ըմբռնմամբ և առավել շեշտված հայագիտական նախասիրություններով, ինչպես նաև 12-րդ դարից գրաբարի աստիճանաբար միջին հայերենով ու աշխարհաբարով փոխարինվելու պատճառով այս դարը համարում են ավարտը մեր հին դասական գրականության: Հետագա դարերում ստեղծված երկերը առավել ցածր դասելով նախորդ շրջանում գրվածներից, մխիթարյան գրականագիտությունը ավանդաբար միակ բացառությունը համարում էր Հովհաննես Երզնկացուն, վերջինիս էլ սակայն գրականության պատմության ընդհանուր շղթայում առավել կապված դիտելով նախորդների, քան թե իր ժամանակակիցների և հաջորդների հետ: Ալիշանը ևս գտնում է, որ Երզնկացիով կնքվում է դասական մատենագիրների շարքը:

Մեր աշխատանքում ներկայացրել ենք ոչ միայն տարբեր հեղինակների և հայ գրականության ընթացքի մասին Ալիշանի հայտնած կարծիքները, այլև քննել այդ կարծիքների արտահայտման կերպը՝ շարադրանքի գեղարվեստականության աստիճանը և յուրահատկությունները: Ցույց ենք տվել, որ 5-րդ դարից մինչև Կիլիկիայի հայկական պետության անկումը ընկած ժամանակահատվածի մասին, որն իր վերելքներով և վայրէջքներով հանդերձ ազգային հպարտության մի շրջան էր նրա համար, գրել է բանաստեղծ Նահապետի լեզվով, սակայն պետականության կորստյան և ազգային ավերների հետագա դարերին արդեն անդրադառնում է գիտնական քննասերը, և ընդհանրացնող բնորոշումներն էլ իրենց տեղը զիջում են պատմագրական գործերին նվիրված բանասիրական հանգամանալից տեղեկություններին, երբ պատմիչի միջոցով ոչ թե գրականությունն ու դարն է արժևորվում, ինչպես էր 5-րդ դարի պատմագրության պարագայում, այլ այն թե այդ դարի պատմության համար որքանով է արժեքավոր տվյալ պատմագրական երկը: Ալիշանի տարբեր գործերի համադրմամբ նաև նշել ենք այն կարևոր հանգամանքը, որ եթե ԺԳ դարով հայագետ Ալիշանի համար ավարտվում է մեր դասական մատենագրությունը, ապա Հայոց Նահապետի համար, ում բազմավեպյան գրական մուտքը նշանավորվեց իր անկրկնելի աշխարհաբարով ստեղծված բանաստեղծություններով և ռամկական երգերի հրատարակությամբ ու արժևորմամբ, ԺԴ և հաջորդ դարերի մեր գրականությունը ծնոք է բերում մեկ այլ որակ ու արժանիք, ուր Շնորհալին լինելով մեր դասական մատենագրության վերջավորողներից մեկը, դառնում է և սկզբնավորողը ռամկական ոճով, այսինքն՝ միջին հայերենով գրված բանաստեղծությունների:

Առավելապես հայագիտական նախասիրություններ ունեցող մխիթարյանների գիտական հետաքրքրությունների ոլորտից դուրս էր նոր շրջանի գրականությունը: Ալիշանը ևս հպանցիկ կերպով է անդրադարձել այս շրջանին: Անգամ 18-19-րդ դարերի գրականությունը նա նախ դիտարկում է պատմագրության շրջանակում, թե որքանով այն կարող է պատմական սկզբնաղբյուր ծառայել: Այս պարագայում էլ, սակայն, նրա համար մեծ նշանակություն են ստանում հատկապես նոր շրջանի գրողների ստեղծագործությունների նյութագրական հատվածները, որպես գեղարվեստական կենդանի բնանկարը տարբեր վայրերի: Ոչ միայն Աբովյանի շունչն ու ոգին, այլև նկարագրության անմիջական ազդեցությունն ենք գտնում ,,Այրարատի,, և ,,Շիրակի,, Անին ու Երևանի բերդը պատկերող գլուխներում: Նույն կերպ ,,Սիսականի,, մի շարք հատվածներում զգալի է ,,Դավիթ բեկի,, և Րաֆֆու ուղեգրությունների շունչը:

Նաև անհրաժեշտ է նշել, որ պատմական Հայաստանը վերակերտելուն զուգընթաց Ալիշանը ուշադիր հետևում է ժամանակի ազգային-հասարակական կյանքին, գրականության մեջ արծարծվող խնդիրներին: Հայ գրականության համաշեշտ այս ընթացքը տպագիր գործերից առավել արտացոլվել է Ալիշանի նամակներում: Այն ինչ նա չի կարողացել գրել տպագրված գործերում, շարադրել է ժամանակի մտավորականներին ուղղված նամակներում, որոնցից հանված տողերով ներկայացրել ենք հայ նոր գրականության մասին Ալիշանի ունեցած ըմբռնումները:

Այսպիսով, Ալիշանի ստեղծագործությունների, նամակների, ժամանակակիցների հուշերի և մխիթարյան վավերագրերի ներառմամբ ցույց ենք տվել, թե ինչպես 1840-ական թվականներից մինչև կյանքի վերջին օրերը հայ դասական մատենագրությունը և գրական կենդանի ընթացքը գտնվում էր Ալիշանի գիտական հետաքրքրությունների շրջանակում: Հայ հին գրականությունը բանասիրական քննության ենթարկելով իմաստավորում էր և իր ապրած օրերի հայացքով, իսկ նոր շրջանի գրականությունը արժևորում մեր դասական մատենագրության ավանդների հաշվառմամբ:

Երրորդ գլուխ՝ ,,ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԱԼԻՇԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ,,: Այս գլխում ցույց է տրվում, թե Ալիշանի գիտական գործերը և մասնավորապես տեղագրական հատորներն իրենց ուղղվածությամբ, կառուցվածքով և անգամ քննության մեթոդով ինչպես են կրել մեր միջնադարյան մատենագրության տարբեր ճյուղերի՝ պատմագրության, գեղարվեստական արձակի ու չափածոյի, աշխարհացույցների և տոմարագիտական աշխատանքների՝ դարերի ընթացքում ձևավորված գրական ավանդույթի ազդեցությունը:

Նման աշխատանքը թույլ է տալիս պարզելու, թե որքանով էին իր անձնական նախասիրություններով և ինչքանով հայ գրականության ու մխի-

© National Library of Armenia

թարյան ավանդույթներով պայմանավորված Ալիշանի այս կամ այն գործի ծնունդը՝ հնարավոր դարձնելով նրա գիտական մեթոդաբանությունը դիտարկել հայ միջնադարյան պատմագրությամբ նվիրագործված ըմբռնումների վրա՝ ԺԸ-ԺԹ դարերի հայկական կլասիցիզմի և ազգային ռոմանտիզմի շրջանակներում:

Ներկայացնելով Ալիշանի 1850-60-ական թթ. աշխարհագրական և բնագիտական բնույթի աշխատանքները՝ ցույց ենք տալիս, որ այս շրջանում նա արդեն պատրաստ էր հրատարակելու իր տեղագրական գործերը, բայց միայն 1881 թվականից սկսած իրար հաջորդող հատորների լույս ընծայումը լոկ նախորդ շրջանի նախապատրաստական աշխատանքով չէր պայմանավորված, այլև թելադրված էր այդ տասնամյակի առաջադրած գրական-հասարակական խնդիրներով: Այս տասնամյակում նկատելի շրջադարձ կատարվեց դեպի անցյալի պատմությունն ու հերոսական դրվագները, որը բացատրվում էր երկու հանգամանքով. դրանցից առաջինը գնալով խտացող գրաքննությունն էր: Այն արևելահայ ու արևմտահայ մտավորականներին պարտադրում էր ասելիքը, ազգային ձգտումներն ու իղձերը արտահայտել այլաբանորեն: Վերջինիս դասական օրինակն են Րաֆֆու պատմավեպերը և պատմագիտական գործերը:

Նման ձգտման երկրորդ պատճառը Բեռլինի վեհաժողովից հետո ստեղծված վիճակն էր, երբ մի կողմից՝ Եվրոպան դավաճանեց հայերին, իսկ մյուս կողմից՝ Թուրքական իշխանություններն էին ժխտում Հայաստանի գոյությունը որպես առանձին պատմա-աշխարհագրական միավոր: Այս պայմաններում պատմությանը դիմելը դառնում էր միջոց թե անցյալի հերոսական դրվագների ոգեկոչմամբ ժողովրդին ոգևորելու և թե քրիստոնյա տերությունների դեմ ուղղված բողոքն ու հիասթափությունը արտահայտելու: Րաֆֆին այն, ինչ չէր կարող ուղղակիորեն ասել ժամանակի քրիստոնյա տերություններին, իր պատմական հերոսների միջոցով ուղղում էր ,,նենգավոր Բյուզանդիոնին,,:

Նույն այս շրջանակում է պատճառաբանվում Ալիշանի հատորների 1880-ական թթ. հրատարակվելը: Ինչպես դրանից մեկ դար առաջ մխիթարյանները, հավատարիմ Մխիթար Սեբաստացու պատգամին, քարտեզագրական մի ողջ դպրոց էին ստեղծելու և օսմանյան կայսրության մի մասը նորից վերածելու պատմական Հայաստանի, նույն կերպ էր վարվելու և Ալիշանը՝ ավերակ առ ավերակ վերակենդանացնելով անցյալի երբեմնի փառքը:

Հեթանոսական շրջանի հայկազուն նախնիների, ապա Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյանց մեծագործություններին զուգահեռ հայ պատմագրության և մխիթարյան ավանդների հետևողությամբ Ալիշանը ևս գրեթե իր բոլոր գործերում, անկախ նրանից, թե գիտական ինչ նպատակներ են

հետապնդում, շարունակ շեշտում է, որ դրախտը Հայաստանում է գտնվել, և ջրհեղեղից հետո կյանքը նորից Հայաստանում է նորոգվել, Նոյյան տապանի Արարատի գագաթին իջնելով: Նման մոտեցմամբ աստվածային ճշմարտությունների հավաստմանը զուգահեռ Ալիշանը ցանկանում է ասել, որ Հայոց աշխարհը հայ ժողովրդին է տրվել Աստծո կողմից: Մխիթար Սեբաստացու, Ղուկաս Ինճիճյանի և մխիթարյան մի շարք այլ հեղինակների գործերի համապատասխան հատվածների վկայակոչմամբ մենք նախ ցույց ենք տալիս, թե միաբանության ներսում ինչպես որոշակի համակարգման ենթարկվեց այս ըմբռնումը՝ հայ ժողովրդի պատմության սկիզբը նույնացնելով մարդու ստեղծմամբ սկզբնավորված համաշխարհային պատմության հետ: ,,Դրախտ Հայաստանի,, անվանված և ազգային յուրօրինակ գաղափարաբանության վերածված այս տեսությունը աշխարհասփյուռ հայության մի քանի սերունդների ներարկեց այն գաղափարը, որ հայ ժողովուրդը մի առաքելություն ունի վերաշինելու, վերատիրելու իր հայրենիքին՝ նորոգյալ աստվածատուր դրախտին: Սակայն թե որպես գիտական համակարգ և թե որպես ազգային գաղափարաբանություն այս տեսությունը ավարտուն մի ամբողջության հասցրեց Ղևոնդ Ալիշանը: Մխիթարյանների համանման գործերի հետ համադրմամբ ցույց ենք տալիս, որ սակայն երկու էական տարբերություն կար Ալիշանի և նախորդների միջև: Նախ, որ նա առանձնակի գեղարվեստականություն և հայրենասիրական հզոր լիցք հաղորդեց այս գաղափարին: Երկրորդ՝ ի տարբերություն նախորդների, որպես հավաստումն դրախտի Հայաստանում գտնվելուն, նա չբավականացավ միայն Աստվածաշնչի և ընդհանրական եկեղեցու հայրերի ու հայ պատմագիրների տողերի վկայակոչմամբ, այլև դիմեց ժամանակի բնագիտության՝ երկրաբանության, բուսաբանության, կենդանաբանության և մյուս գիտակարգերի ընձեռած տվյալներին, որը բացատրում ենք հետևյալ հանգամանքով. ԺԸ դարի 30-ական թվականներից և ԺԹ դարի սկզբից եվրոպական գիտությունը կասկածի ենթարկելով խորենացու և մի շարք այլ պատմիչների վավերականությունը և ժամանակը՝ համանման մոտեցում ցուցաբերեց և հայ պատմագրության կողմից նվիրագործված ըմբռնումների հանդեպ: Բնագիտական տվյալների վկայակոչմամբ Ալիշանը նախ ցանկանում էր լրացուցիչ փաստարկներով հավաստել հայ պատմագրության վավերականությունը, ինչպես նաև ցույց տալ, որ ժամանակի գիտությունը ոչ թե մերժում, այլ հավաստում է այն, այսինքն՝ Հայաստանի բնագրության ալիշանյան քննությունն իսկ նաև հայ մատենագրությամբ ձևավորված ավանդույթը պաշտպանելու միտումն ուներ:

Մեկ առ մեկ ներկայացնելով տեղագրական գործերը՝ ոչ թե անդրադառնում ենք բնագիտության պատմությանն առնչվող խնդիրներին կամ Ալիշանի հայագիտական ըմբռնումներին, այլ մատնանշում այն հատվածներն ու թեմաները, որոնց մասին գրելիս նա նկատի է ունեցել անցյալի գրական

© National Library of Armenia

ավանդները: Ալիշանի աշխարհագրական գործերը դիտելով գեղարվեստական-գրականագիտական տեսանկյունից՝ ցույց ենք տվել, որ յուրաքանչյուր հատորում երկրի տեղագրությունն այն հարթությունն է, որի վրա բարձրանում են տվյալ նահանգի բերդերն ու ամրոցները, որ այս երկերը տեղագրությունից առավել հայ պատմիչների վկայություններով հյուսված յուրօրինակ տեղագրական ժամանակագրություններ են:

Ժամանակի հայ գիտության ընդհանուր ընթացքով պայմանավորված և շեշտված ազգային-քաղաքական խնդիրներ հետապնդող այս գործերը չէին կարող վրիպել թուրքական իշխանությունների աչքից, որոնք արդեն արգելեցին երկրորդ գրքի՝ ,,Սիսուանի,, մուտքը օսմանյան կայսրություն: Ալիշանի նամակագրության և ժամանակի տարբեր վավերագրերի համադրմամբ ցույց ենք տվել, որ ինչպես 1880-ական թթ. սկզբին Հայաստանի տարբեր նահանգների տեղագրությանը նվիրված գործերի ծնունդը պայմանավորված էր ժամանակի գրական-հասարակական գործոններով, այնպես էլ 1893 թ. հրատարակված ,,Սիսականին,, նոր գործերի չհաջորդելը վերստին բացատրվում է նույն գործոններով:

Չորրորդ գլուխ՝ ,,ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ,,: Ինչպես Ալիշանի հայագիտական ուսումնասիրություններում, անգամ բնագրագիտական ամենանրբին ննուրություններում իսկ նկատելի է բանաստեղծության շունչը և դրոշմը, այնպես էլ նրա գեղարվեստական գործերում միշտ ներկա է բանասերը, գիտնականը: Այս երկակայությունն առավել ցայտուն զգացվում է հենց ,,Նահապետի երգերում,, , որոնց գրությանը նախորդող և զուգահեռ ընթացող շրջանում նա ,,Բազմավեպի,, էջերում հրատարակեց, արժևորեց և վերլուծեց հայ միջնադարյան և ժողովրդական մի շարք ստեղծագործություններ: Նման սերն ու նվիրվածությունը ,,ազգային-ռամկական,, երգերի հանդեպ միայն նրա անձնական նախասիրություններով չէին բացատրվում, այլև թելադրված էին ազգային կյանքի առաջադրած խնդիրներով, որոնց արդեն արձագանքել էին Խաչատուր Աբովյանն ու Մեսրոպ Թաղիադյանը: Հատկանշական է նաև, որ միևնույն 1852 թ. ,,Հայոց երգը ռամկականքին,, զուգահեռ Թիֆլիսում լույս է տեսնում Գևորգ Ախվերդյանի ,,Սայաթ Նովան,,: Նույն երկրում ծավալվող շարժմանը հեռավոր Վենետիկի իր խցում երկտասարդ գիտնականն արձագանքում է միջնադարյան տաղարանների գանձերը վեր հանելով: Ընդհանրապես զարմանալի մի ընդհանրություն է նկատելի Աբովյանի ու Ալիշանի գործունեության, գրականության լեզվի և զարգացման հեռանկարների մասին նրանց հայացքների միջև: Ձևավորվող նոր շրջանի գրականության համար բախտորոշ նշանակություն էին ունենալու ,,Վերք Հայաստանին,, ու ,,Նահապետի երգերը,,: Հրանտ

Թամրազյանի բնորոշմամբ Ալիշանը ,,ինև գեռ ծանոթ չէր Աբովյանի ,,Վերքին,, , բայց նրբընալես հարազատ էր: Նա զտնում է բարձրացող հայության հոգևոր վերելքի երգիչը,,:

Ժողովրդական ստեղծագործությունների ալիշանյան արժևորումը թելադրված լինելով ազգային կյանքի առաջադրած խնդիրներով, միաժամանակ իր տեսական հարցադրումներով և ընդհանուր ուղղվածությամբ այնուամենայնիվ ստուգաբանվում է համաեվրոպական ընդհանուր գրական շարժման շրջանակներում: Ինչ վերաբերվում է ժողովրդական երգերի տպագրությանը զուգահեռ ,,Բազմավեպի,, էջերում ,,Նահապետի երգերի,, հրատարակությանը, ապա դրանք միջնադարյան տաղերի և ,,ռամկական,, ստեղծագործությունների հետևողությամբ գրելը ևս միայն վերջիններիս ուսումնասիրմամբ և հրատարակությամբ պայմանավորված արտաքին-թեմատիկ և լեզվաոճական ազդեցություններով չէր թելադրված, այլ հակառակը: Ալիշանը միտումնավոր է ընտրել նման եղանակը՝ արձագանքելով մինչ այդ ողջ եվրոպայով անցած ռոսեանականության ալիքին: Ինչպես հայկական կլասիցիզմը անտիկ թեմաները փոխարինեց հայկական հերոսական անցյալով, այնպես էլ Ալիշանի ստեղծագործական բուրայում հյուսիսային Շոտլանդիայի ծեր բարդը դարձավ Հայոց Նահապետ՝ համաշխարհային ազգային դրոշմ հաղորդելով նաև ռոսեանականությունը բնորոշող առանձնահատկություններին: Այսինքն ,,Նահապետի երգերը,, ստուգաբանելով ընդհանուր եվրոպական գրական շարժման շրջանակներում, բուն բանաստեղծական պատկերներով, թեմաների ընտրությամբ, լեզվա-ոճական յուրահատկություններով արդեն կապվում են ուշ միջնադարի հայ բանաստեղծության հետ:

Զուգահեռ անցկացնելով ,,Նահապետի երգերի,, և նախորդ շրջանի գրականության միջև, ցույց ենք տալիս թե ազգու և զարնան միջնադարյան ավանդական պատկերները գեղարվեստական ինչ զարգացում են ապրել 12-18-րդ դարերի հայ բանաստեղծությունում և ազգային ինչ վերիմաստավորման ենթարկվել Ալիշանի ստեղծագործություններում: Բազմաթիվ օրինակներ ենք բերում, թե ինչպես հարազատ մնալով ժողովրդական արտահայտչամիջոցներին ու նաև ԺԷ դարի սկզբին ստեղծագործած Նահապետի պատրանքը ստեղծելու համար Ալիշանը բազմիցս դիմում է միջին հայերենին և ժողովրդական ձևերին ակ, իկ, ուկ փաղաքշական ձևերի և տարբեր բառերի բարբառային տարբերակների վարպետ կիրառությամբ: Նշել ենք, որ Ալիշանը ոչ միայն ազգային վերի-մաստավորման է ենթարկել ավանդական միջնադարյան մի շարք խորհրդանիշներ, այլև դրանք յուրօրինակ բանաստեղծական զույգերով նորովի կիրառել գեղարվեստական առումով: Այս տեսանկյունից առավել հանգամանալի կերպով ենք վերլուծել հատկապես շարքի առաջին՝ ,,Հայոց աշխարհիկ,, բանաստեղծությունը: Ներկայացրել ենք

© National Library of Armenia

Երգ երգոցի /Բ 11-13/ տողերի ստեղծագործական ուրույն զարգացումը հայ բանաստեղծության մեջ: Քրիստոսի հարությունը խորհրդանշող գարնան միջոցով հայ հեղինակները միաժամանակ արտահայտել են իրենց կենսական զգացմունքները և բնության գեղեցկությունները: Գարունը դարձել է նաև արտահայտիչը ազգային սպասումների, Քրիստոսի հարության համաբանությամբ խորհրդանշելով և հայրենիքի հարությունը, վերածնությունը: Այնուհետև ցույց ենք տվել, որ ,,Հայոց աշխարհիկը,, իր բանաստեղծական հորինվածքով ունի գարնանը նվիրված միջնադարյան բանաստեղծությունների կառուցվածքը, ուր բնության կենդանանալը, զարդարվելը վերածվում է հայոց աշխարհի գեղեցկության բանաստեղծական ներկայացման, թեմատիկ առումով էլ առավել շեշտված կերպով արտահայտելով հայրենիքի վերածնության գաղափարը: Ստեղծագործական համանման զարգացման մեջ ենք դիտել և նորատունկ այգում ելնելու մոտիվը: Թե ինչպես հայ հեղինակները դրախտը նույնացնելով Հայաստանի հետ, կամ տեղադրելով այնտեղ, կորուսյալ դրախտի վերականգնման մեջ հանձինս ավերված այգու տեսնում էին նաև ավերված հայրենիքի գաղափարը և թե այն գեղարվեստական մի նոր պոռթկմամբ ինչպես է արտահայտվել Ալիշանի ստեղծությունններում:

Քննության նման մեթոդ ենք որդեգրել և մյուս ստեղծագործությունների պարագայում, նշելով որ Ալիշանը ասելիքը արտահայտելով միջնադարյան գրականության արտահայտչամիջոցներով և պատկերներով, ,,Նահապետի երգերով,, արձագանքել է ժամանակի ազգային-հասարակական խնդիրներին և որ շարքի մի մասը գրված է Վենետիկյան պատմության անմիջական ազդեցության ներքո, որն էլ սակայն իր հերթին բանաստեղծական մարմնավորում է ստացել ազգային տարազավորմամբ՝ հանձինս հայոց մայր լեռան ներսում նիրհող հրաքուխի:

,,Նահապետի երգերը,, գեղարվեստորեն կերպավորող բոլոր շերտերի քննությունը մեզ բերում է այն եզրակացության, որ այս շարքով Ալիշանը ստեղծագործական առումով արձագանքելով ժամանակի համաեվրոպական գրական շարժմանը, դրանք ծառայեցնում է ժամանակի հայ գրականության առաջադրած խնդիրներին, օսյանականությանը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները և արտահայտչամիջոցները ներկայացնելով հայ միջնադարյան գրականության պատկերային համակարգի միջոցով, որպես գիտական նրբորեն քննելով ուշ միջնադարի հայ բանաստեղծության լեզվական յուրահատկությունները և վերջինիս լեզվական շղարշով պատելով իր գործերը:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Մի էջ Էջմիածնի տպարանի պատմությունից, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1986, թիվ 1, էջ 147-152:

2. Մի հին երգի ամբողջական բնագիրը, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1984, թիվ 1, էջ 163-166:

3. Շնորհալին Ալիշանի գնահատությամբ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1990, թիվ 2, էջ 138-142:

4. Գրական ավանդույթը Ալիշանի տաղագրական գործերում, Էջմիածին, 1996, թիվ 4, էջ 71-84:

В.Г. ДЕВРИКЯН

ГЕВОНД АЛИШАН И ДРЕВНЕАРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

Резюме

Диссертационная работа на соискание ученой степени кандидата филологических наук представляет собой литературоведческий анализ научного и художественного наследия Гевонда Алишана (1820-1901).

Диссертация состоит из введения, четырех глав и списка использованной литературы.

Во введении обоснованы цель и задачи диссертационной работы, с учетом посвященных творчеству Алишана исследований представлена краткая история вопроса.

В первой главе -"Древнеармянская литература в издании Алишана"- анализируются соответственно разделенные по тематическому признаку исследования ученого памятников древнеармянской литературы. Одновременно уточняется в какой мере издание того или иного текста обусловлено литературными пристрастиями Алишана, а в какой - литературно-общественными задачами и требованиями времени.

© National Library of Armenia

Во второй главе, озаглавленной "Древнеармянская литература в оценке Алишана", из примерно сорока сочинений выявлены и собраны воедино характеристики ученого авторов прошлого, помещенные в работе в хронологическом порядке и представляющие в результате историю древнеармянской литературы по Алишану.

В третьей главе - "Литературная традиция в научных трудах Алишана", исследуются труды, посвященные исторической географии Армении, показана прямая и косвенная связь источников с общим процессом развития армянской литературы 70-90гг. XIXвека.

Четвертая глава - "Песни Наапета и литературная традиция", посвящена анализу связи настоящего поэтического цикла со средневековой литературой в тематическом, жанровом, лексическом и стилистическом аспектах.

05.02.2013

ՀՀ Ազգային գրադարան
NL1710106

© National Library of Armenia

Во второй главе, озаглавленной "Древнеармянская литература в оценке Анания", на примерах отрывков сочинений выявлены и собраны все его характеристики [illegible] периода [illegible], помещенные в работе в хронологическом порядке и [illegible] в результате история древнеармянской литературы по Ананию.

В третьей главе - "Литературные традиции в научных трудах Анания", исследуются труды, посвященные исторической географии Армении, [illegible] прямые и косвенные связи источников с общим процессом развития армянской литературы [illegible] XI века.

Четвертая глава - "Стихи Анания и литературная традиция", посвящена анализу стихов [illegible] по сравнению с предшествующей литературой в тематическом, жанровом, [illegible] и стилистическом аспектах.

0 5 .02. 2013